



**aeCP**

the armenian eyecare project  
bringing sight to armenian eyes




## ԿԱՏԱՐԱԿՏ

Առարկաների խոշորացումն աչքում տեղի է ունենում ավելի շատ եղջերենու, քան ոսպնյակի շնորհիվ, որը գտնվում է աչքի մեջ: Առհասարակ ոսպնյակը ջրի պես թափանցիկ է: Կատարակտը, որ լատիներեն նշանակում է «ջրվեժ», ակնային հիվանդություն է, որի հասունացման ժամանակ ոսպնյակը պղտորվում է և նմանվում փրփրոտ ջրի: Կատարակտն առաջացնում է տեսողության աստիճանական անցավ կորուստ:

### Ախտանշաններ

Սկզբնական շրջանում կատարակտի ախտանշաններ գրեթե չեն լինում: Դուք կարող եք նկատել տեսողության թեթևակի խավարում, ինչպես պղտոր ապակու միջով նայելիս: Կատարակտի պատճառով արևի կամ լուսամինիֆի լուսը կարող է չափազանց վառ թվականությամբ առաջանալ: Համար այս դեպքում աչքերի շլացում: Հնարավոր է նաև, որ գիշերային ժամերին մերժնա վարելիս հանդիպակաց մերժնաների լուսերի շուրջը կուրացնող «լուսապակներ» երևան: Բացի այդ, գոյները կարող են այլևս այնքան էլ պայծառ չլինել:



# Կատարակտի վարգացման Վտանգի գործոններ

Կաթիլներ, հաբեր, Ներարկումներ) կիրառումը: Քիմիաթերապիան, ինչպես նաև ճառագայթումը կարող են արագացնել կատարակտի վարգացումը: Նշված գործոններից խուսափելը կարևոր է աչքերի համար:

Կատարակտն ախտորոշելու միակ տարրերակը աչքերի ստուգումն է: Եթե ձեր ակնաբույժն ախտորոշել է կատարակտ, ապա նա կիետվի ձեզ և կառաջարկի հետագա բուժում:

## Ախտորոշում

### Կատարակտի բուժում

Կատարակտի բուժման ձևը վիրահատությունն է: Բուժման հետաձգումը հղի է բարդություններով՝ ներակնային ճնշման բարձրացումով և գլաւուկումայի վարգացումով: Վաղ շրջանում կատարակտն ավելի հեշտ է հեռացվում, հասուն կատարակտի համեմատ՝ նվազում է բարդությունների վտանգը, և հնարավոր

է լինում կիրառել վիրահատման լավագույն եղանակներ: Ակնաբույժը կիեռացնի ձեր պղտորված ոսալյակը, որն ամենայն հավանականությամբ կփոխարինվի թափանցիկ պլաստիկ ոսալյակով: Տեսողությունը վերականգնվում է գրեթե ամբողջությամբ, և որպես կանոն՝ հետագա խնամքի և լրացուցիչ վիրահատությունների կարիք չի լինում: Ակնային այլ հիվանդությունների բացակայության պարագայում կատարակտի վիրահատությունը հնարավորություն է տալիս հաջողությամբ վերականգնելու տեսողությունը: Եթե ձեր տարիքը 60-ից բարձր է, անհրաժեշտ է ստուգել տեսողությունն առնվազն երկու տարին մեկ: Ստուգումը պետք է ներառի բիբերի լայնացում կաթիլների միջոցով: Կատարակտը կարելի է ախտորոշել առանց բիբեր լայնացնելու, սակայն լայնացման դեպքում ակնաբույժն ավելի լավ կուտսնի աչքի հատակը ախտորոշելու համար աչքի այլ հիվանդություններ՝ դեղին բծի տարիքային դիստրոֆիա, գլաւուկումա, դիաբետիկ ռետինոպաթիա և այլն:



Հայկական ակնաբուժության նախագիծ  
ՀՀ, ք. Երևան, Ազգային 5-րդ փող., տուն 7

Հեռ. +374 10 55 90 68

aecp@aecp.am

aecp.am

 **aecp**  
the armenian eyecare project  
bringing sight to armenian eyes

 Հիմնադրամ